# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
**31 հոկտեմբերի 2018 թվականի N 266-Ա**

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 68-րդ հոդվածի 6-րդ կետերով, հիմք ընդունելով «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ կանոնադրության 6.1-րդ կետի 3-րդ մասը, Հիմնադրի և Ընկերության տնօրենի միջև 2017 թվականի փետրվարի 3-ին կնքված N 22 աշխատանքային պայմանագրի 3.6-րդ կետի ա) և բ) դրույթները՝

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.**

1. «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական և ընթացիկ գործունեությունը, 2017 թվականի փետրվարի 3-ին կնքված N 22 աշխատանքային պայմանագրի պահանջների կատարումն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Մարինե Աբգարյան | - | ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Արմեն Թադևոսյան | - | առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ |
| Արփինե Դավթյան | - | իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ |
| Տիգրան Գրիգորյան | - | ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ: |

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրություններն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** — **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2018թ. հոկտեմբերի 31